№ 56 ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 24 — 1900 — ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 24 № 56

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՕՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
ՏԷԼԷՖՕՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կատարելագործված մեքենաներ.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Երկրաշարժից Ջնասվածների օգտին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Շվէյցարիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հանգուցեալը.

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԱԾ ՄԵՔԵՆԱՆԵՐ

—

Ահա մի տասնհինգ տարի կայ, որ Անգրկովկասի գիւղական ազգաբնակութիւնը փորձում է ձեռք բերել կատարելագործված գութաններ և ուրիշ գիւղատնտեսական գործիքներ, սակայն փոքր ի շատէ մեծ քանակութեամբ նա սկսել է գնել այդ գործիքները միայն վերջին 5—6 տարվայ ընթացքում: Նոյն շարժումը նկատվում է և Փոքր Ասիայի այն մասերում, որոնք մօտ են երկաթուղու գծերին և Ծովափեայ մեծ կենտրոններին: ,,Moniteur officiel du Commerce" թերթը հաղորդում է, որ Զմիւռնիա քաղաքում ամեն տարի վաճառվում է մօտ 2000 հատ գութան՝ իւրաքանչիւրը 30—40 ֆրանկ արժողութեամբ: Նոյն տեղում վաճառվում են մի քանի հարիւր հնձելու, կալսելու և հատիկները զտելու մեքենաներ:

Սակայն կատարելագործված գործիքներ ձեռք կը բերեն և երկրի խորքերում գտնվող գիւղատնտեսները, եթէ նրանք յարմարութիւն ունենային տեղական վաճառանոցներում տեսնել այդ գործիքները և գնել ձեռնտու պայմաններով: Դժուար է գիւղատնտեսի համար հեռաւոր տեղեր գնալ մեքենաներ ընտրելու, գնածը երկար ճանապարհներ տանել մինչև գործելու տեղը հասցնելու համար, երբ մանաւանդ դաշտային պարապմունքները չեն թոյլ տալիս ուշացնել այս կամ այն աշխատանքը:

Մեքենաների տարածման խանգարում է և այն հանգամանքը, որ տեղական վարպետները՝ ատաղձագործները, հիւսները ծանօթ չեն մեքենայի կազմութեան և անկարող են կարկատել ու վերանորոգել նրանց փչացած և քայքայված մասերը: Եւրոպական գործարաններից շատերը, աչքի առաջ ունենալով այդ դժուարութիւնները, պատրաստում են մեքենայի զանազան մասերը մեծ քանակութեամբ, որոնք ուղարկվում են այն պահեստները, որտեղ վաճառվում են մեքենաները: Հասկանալի է, որ այդպիսի պատրաստի մասերից կարող են օգտվել այն գիւղատնտեսները, որոնց տնտեսութեան մօտ կան գործիքների խանութներ և ուրեմն կարող են կարճ միջոցում դրստել մեքենայի խանգարված մասերը և շարունակել իրանց գործը:

Մեր գիւղական ազգաբնակութեան օգնելու համար անհրաժեշտ է, որ գաւառներում բացվէին գիւղատնտեսական գործիքների պահեստներ: Այդպիսի պահեստները կարող են շահաւէտ լինել ձեռնարկողների համար, որովհետեւ տարէցտարի ընդարձակվում է կատարելագործված գործիքների տարածումը մեր երկրի մէջ:

Մենք հաւատացած ենք, որ Ալէքսանդրոպոլի, Կարսի, Նոր-Բայազէթի, Վաղարշապատի շուրջ ապրող գիւղական ազգաբնակութիւնը կարող է այնքան գործիքներ գնել, որ կապահովի այդ շրջաններում բացված գիւղատնտեսական պահեստները: Եւ ցանկալի է, որ հանդէս գան ձեռնարկողներ և մատակարարեն ազգաբնակութեանը կատարելագործված մեքենաներ: Այդ բանը կարող է վերցնել իր վրա և Գիւղատնտեսական ընկերութեան Երեւանեան բաժինը, եթէ լուրջ կերպով ցանկանայ այդ կարևոր գործը կազմակերպել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

«Վերջին բեկոր մը հնդկահայ գրականութենէն»—այս՝ ուշադրութիւն գրգռող վերնագիրը Կ. Պոլսի «Արեւելք» լրագրի մէջ տրված է մի յօդուածի, որ խօսում է այժմ կենդանի հընդկահայ մի գրագէտի մասին: Վերջին... Հնդկահայերի գաղթականութիւնը XVIII դարի երկրորդ կէսից ահագին ծառայութիւններ է մատուցել հայրենիքում ապրող հայերին: Ահագին հարստութիւններ դիզելով, այդ մարդկանցից շատերը չուզեցին ոսկի կուռքին երկրպագող քուրմերի պաշտօնով բաւականանալ, այլ յիշեցին իրանց աարաբաղդ հայրենակիցներին, որոնք թիւրք-պարսկական երկաթի լուծի տակ ճնշված, կրօնական երկպառակութիւնների զոհ դարձած՝ խաւարի եւ տգիտութեան մէջ անյայտանալու վիճակի մէջ էին: Հնդկաստանից եկաւ ազատութեան գաղափարը եւ միայն մի հատ Շահամիրեան ինչեր կասէր մեզ, եթէ այսօր նրա գրագրութիւնները, նրա ծրագիրները անյայտ չը մնային, այս ու այն անհատի գրագրատետրում փտած: Այնտեղից եկաւ գրական եւ կրթական մեկենասութիւնը. Վենետիկը, էջմիածինը հնդկահայերի դրամներով դպրոցներ, տպարաններ հիմնեցին, գրքեր հրատարակեցին: Այնտեղ սկսվեց եւ գրական մի աչքի ընկնող գործունէութիւն: Զարմանի պատմութիւնից առաջացած ազգասիրական չովինիզմը, որ շատ ներելի էր կրիտիկայից ու ուսումնասիրական նիւթերից զուրկ այն ժամանակներում, առաջին անգամ արձագանք գտաւ հընդկական հայ գրքերի մէջ եւ ապա միայն մտաւ թիւրքահայերի եւ ռուսահայերի մէջ: Հնդկաստանն էր, որ հայերէն առաջին պարբերական հրատարակութեան հայրենիք դարձաւ. եւ XIX դարի առաջին կէսում պարբերական մամուլը բաւական զարգացաւ Հնդկաստանում. դա այն ժամանակն էր, երբ մամուլը դեռ չէր հաստատվել Հայաստանին շատ մօտիկ գաղթականութիւնների մէջ (Կ. Պոլիս եւ Թիֆլիս), ուստի գրագէտ հայութիւնը Գանգէսի ափերից էր ստանում այն հոգեղէն կերակուրը, որ կարող է մատակարարել մայրենի լեզուով լոյս տեսնող պարբերական հրատարակութիւնը: Ցիշենք որ մտրակող ու մերկացնող մամուլի առաջին տիպը Հնդկաստանում է ծնվել: Բացի պարբերական մամուլից՝ Կալկաթայի հայերը տուել են եւ ուրիշ շատ գրքեր, այնպէս որ կարելի է ասել, որ մեր գրականութեան պատմութեան մէջ այդ փոքրիկ գաղութը XIX դարի առաջին կէսում Վենետիկից յետոյ առաջին տեղը կարող է բռնել: Բայց դա եռանդի մի ժամանակաւոր բռնկում էր. եւ Հնդկաստանը վերջ ի վերջոյ պիտի հանգցներ իր գրական ճրագները իբրեւ մի հեռաւոր գաղթականութիւն, որ կտրված էր բուն հայրենիքից եւ, չունենալով մտաւոր—գրական գործունէութեան իրական յենակէտեր, պիտի ընդունէր չափազանց միակողմանի, նեղ ու սահմանափակ ընթացք: Քառասնական թւականներին, երբ աշխարհաբարի կաթաղի կռիւներն էին տեղի ունենում մեզ մօտ, գրաբարեանները ցոյց էին տալիս հընդկահայերին, որոնք գրաբարը նոյն իսկ խօսակցական լեզու էին դարձրել եւ գործ էին ածում իրանց ընտանիքներում: Եւ ինչ: Այդքան թունդ պահպանողականութիւնն անգամ չը կարողացաւ փրկել հնդկահայերին, եւ այսօր մենք համարեա ոչինչ հասկացողութիւն չունենք՝ կան այնտեղ հայեր, քանիսն են եւ ինչ են անում: Կէս դարի ընթացքում միանգամայն անյայտանալ, կորչել, չը նայած որ Եղիշէի լեզուն գործածական էր դարձրած—չէ՞ նշանակում այս հանգամանքը թէ հայոց գաղթականութիւնների անհետացման գլխաւոր պատճառն այն է, որ նրանք չը կարողացան կապվել մայր հայրենիքի հետ իրական, մտաւոր կապերով: Այդ կղզիացման, խորթութեան մի նշան է եւ այդ «բեկորը», որի մասին խօսում է «Արեւելքը»: Կալկաթայի դպրոցի հայ ուսուցիչ, ծերունի Թ. Տէր-Ստեփանեան թարգմանել է Դրէպէրի «Դիմամարտութիւն կրօնի եւ գիտութեան» անունով նշանաւոր գործը: Բայց թարգմանել է մի լեզուով, որ վաղուց արդէն հանված է գործածութիւնից. դա միջնադարեան գրաբարն է, որ եւ սպանել ու ոչնչացրել է հնդկահայի աշխատութիւնը:

Թարգմանութեան տպագրութիւնը — ասում է «Արեւելքը»—իրապէս շատ քիչերու միայն օգտակար կարող է ըլլալ: Եռասուն քառասուն տարի առաջ գուցէ իր տեղը ունենար գրականութեան մէջ, կամ Մխիթարեանները չափազանց սուղ գինի մը փոխարէն կարելի է անով յանձն առնէին ստուարացնել իրենց ոսկեզօծ շատ մը գրքերուն, փոշիներու տակ թաղուելու սահմանուած պաշարը: Ժամանակ տուած է արդէն վճիռը: Այդ լեզուն ընթացիկ գրականութեան մէջ գոյութիւն ունենալու իրաւունք կորսնցուցած է այլ եւս:

Եւ սակայն Դրեպէրը այնպիսի հեղինակ չէ, որ Մխիթարեանների գրականութեան շրջանում տեղ ունենայ եւ «փոշիներու տակ թաղուելու սահմանուած պաշարին» արժանի լինի: Բայց թէ հնասիրական նախապաշարմունքը ինչպէս է սպանում ամեն մի կենդանի գործ—այդ, կարծում ենք, շատ լաւ ապացուցել է հնդկահայ գրականագէտների վերջին մոհիկանը, ապացուցել է մի եւ նոյն ժամանակ թէ ինչից մեռաւ հնդկահայերի գրականութիւնը: Եւ «Արեւելքի» յօդուածագիրը շատ իրաւացի կերպով հրաւիրում է ծերունի ուսուցչին դէպի իրականութիւն:

Բազմահմուտ եւ ալեւոր Տէր-Ստեփաննոսեանին կը սպասենք աշխատութեան տարբեր ուղղութիւն մը, որուն համար ամբաւ պաշար կարող է գտնել իր ապրած միջավայրին մէջ իսկ: Կը սպասենք լսել իրմէն Հնդկահայերու անցեալ, ներկայ կեանքէն, թող հաճի գրել մեզի իրենց կաց ու դիրքին եւ տեղային յարաբերութեանց վրա: Այդ նիւթերը բոլորովին կոյս եւ անմշակ մնացած են մինչեւ հիմա ու վերջին աստիճան հետաքրքրաշարժ մեզի համար:

Այո, «բոլորովին կոյս եւ անմշակ»: Մի ամբողջ եռանդուն ու գործունեայ գաղթականութիւն, որ մեծ երախտիքներ ունի իր ազգին, անհետանում է բոլորովին, մոռացվում է, եւ ոչ ոք չէ գրում նրա պատմութիւնը, նրա անցեալի չարն ու բարին: Դեռ Խորենացին էր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼԸ

(Գի դը Մօպասանի)

—

Խելագարի պէս էի սիրում նրան: Ինչու՞ են սիրում մարդիկ: Մթթէ տարօրինակ չէ, երբ ողջ աշխարհում միայն մի արարած ես տեսնում. ուղեղումդ միայն մի միտք կայ, սրտումդ՝ մի ցանկութիւն, շրթունքներիդ մի անուն. մի անուն, որ սրտի խորքից անընդհատ բերանդ է գալիս, ինչպէս աղբիւրի ջուրն իր ակնում. մի անուն, որ շարունակ, ամեն տեղ, շնչում ես աղօթքի նման:

Ես չեմ պատմի մեր պատմութիւնը: Սէրը միայն մի պատմութիւն ունի եւ այն էլ միշտ միակերպ:

Ես նրան պատահեցի, սիրեցի—ահա բոլորը: Մի տարի ամբողջովին կորած նրա սիրոյ, նրա գրկի մէջ՝ ես ապրեցի նրա փաղաքշանքներով, նրա հայեացքով, նրա խօսքով. ամբողջ էութեամբս այնպէս էի նրան նուիրված, որ ոչ օր ունէի եւ ոչ գիշեր, չը գիտէի կենդանի եմ թէ մեռած, երկրիս երեսին, թէ մի այլ աշխարհում:

Եւ ահա նա մեռաւ: Ի՞նչպէս, չը գիտեմ, չեմ յիշում: Մի անգամ նա վերադարձաւ երեկոյեան, անձրեւի տակ ընկած եւ միւս օրը սկսեց հազալ: Մի ամբողջ շաբաթ նա հազաց ու մրտաւ անկողին: Ի՞նչ եղաւ յետոյ, էլ չեմ յիշում:

Գալիս ու գնում էին բժիշկներ, գրում էին դեղատոմսեր, բերում էին դեղեր—մի ինչ-որ կին էլ խմեցնում էր: Նրա ձեռքերը շատ էին տաք. ճակատն այրվում ու թաց էր. հայեացքը փայլուն էր ու տխուր: Եռ խօսում էի հետը, նա ինձ պատասխան էր տալիս: Ի՞նչ էինք խօսում մենք, չեմ յիշում: Ամեն ինչ, ամեն ինչ մոռացել եմ: Նա մեռաւ: Շատ լաւ եմ յիշում նրա վերջին, թոյլ, թեթեւ հառաչը... Հիւանդապահն ասաց. «ախ». եւ ես հասկացայ, ամեն բան հասկացայ: Իսկ յետոյ՝ ես ոչինչ չը գիտեմ, ոչինչ: Մի ինչ-որ քահանայ արտասանեց. «ձեր սիրուհին». ինձ թւաց, թէ նա վիրաւորում է նրան: Երբ նա մեռաւ, ոչ ոք այլ եւս իրաւունք չունի իմանալու: Ես քահանային վռնդեցի: Եկաւ մի ուրիշը, սա շատ բարի էր ու հեզ: Ես արտասվում էի, երբ նա խօսում էր նրա մասին:

Ինձ հարցնում էին թաղման վերաբերմամբ զանազան բաներ. էլ չեմ իմանում ինչ: Միայն լաւ եմ յիշում նրա դագաղը եւ մուրճի հարւածները, երբ դագաղի մէջ դրին ու մեխեցին: Օ՜, Աստուած:

Նրան թաղեցին, հողով ծածկեցին. նրան, այն փոսի մէջ: Եկան ինչ-որ մարդիկ—նրա ամփոփում նրան, տիրում էր ինչպէս ես, իմ սիրակէզ հայեացքը: Ինձ թւաց, թէ սիրում եմ նրան. ձեռք տուի, բայց սառն էր: Օ՜, յիշողութիւն: Օ՜, սարսափելի, այրող, կենդանի հայելի, որ ստիպում ես այսպէս բուռն տանջվել: Բազդաւոր են նրանք, որոնց սիրտը նըման է ապակու, որի վրայով ցոլացմունքը սահում ու կորչում է, որը մոռանում է այն ամենը, ինչ-որ բովանդակել էր երբեւէ, բոլորը ինչ-որ անցել էր նրա առաջից, ամեն բան, որ ինքն իրան տեսել էր մէջը եւ ինչ արտացոլել էր իր մտերմութեան ու սիրոյ ժամանակ: Ի՞նչպէս ես տանջվում եմ: Տանից դուրս եկայ եւ, հակառակ ,կամքիս, անգիտակցաբար գնացի գերեզմանատուն: Ես գտայ նրա անշուք գերեզմանը, նրա մարմարէ խաչը, որի վրա մակագրած էր. «Նա սիրում էր, սիրված էր ու մեռաւ»:

Նա այնտեղ էր, հողում, քայքայված:

Օ՜, սարսափ: Հեկեկալով երեսիս վրա ընկայ գետին եւ մնացի այդպէս երկար, շատ երկար: Ապա նկատեցի, որ մութն ընկնում է, այն ժամանակ ցանկացայ այդ գիշեր, վերջին անգամ անցկացնել նրա մօտ, կուշտ լցնելով գերեզմանի վրա: Բայց կարող էին ինձ տեսնել ու վռնդել: Ի՞նչ անեմ. մտածեցի խորամանկութիւն բանեցնել: Սկսեցի թափառել այդ մեռելների քաղաքում: Ես շրջում էի, անվերջ շրջում: Ի՞նչպէս փոքր է այդ քաղաքը, համե-

գանգատվում մեր անուսումնասիրութեան վրա։ Մեր երկու զոյգ ու կէնտ բանասէրները զբաղված են անվերջ տառակերութեամբ, ահագին հատորներ են հրատարակում պատմական այս կամ այն վիճելի հարցի մասին, իսկ անվիճելի պատմութիւնը կորչում, անհետանում է, որովհետեւ նա նոր է եւ հետաքրքրութիւն չէ զարթեցնում։ Չը կան մարդիկ, որ մտնեն անգլիական արխիվները, հարց ու փորձ անեն կենդանի մնացածներին ու գրեն հնդկահայերի պատմութիւնը։ Բայց դա հարկաւոր է. մինթէ նոր լինելը արգարացնում է այսպիսի անհոգութիւնը։ Չէ՞ որ այսպէս վարվելով, մենք մեր սերունդներին կը թողնենք այն, ինչ Խորենացիների սերունդները մեզ են թողել, այսինքն վիճելի հարցերի մի մեծ բեռ, որոնց լուծելու համար ահագին եւ շատ անգամ անհարկաւոր հատորներ պէտք է գրվեն։

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Ստացանք Ախալքալաքի երկրաշարժից վնասվածների օգտին.

Սաբզուարից՝ (Պարսկաստան) Աւագ Մէլիք-Աբրահամանից 60 ր., որ ժողովված է մի քանի հայ վաճառականներից։

Պեատիգօրսկից՝ Աբրահամ քահ. Շխինեանի միջոցով 3 ր. 99 կ., որ նուիրել են Գիւրգեվկի հայ զինուորները։ Նուիրատուներն են. Մ. Դաւթեան 50 կ., Յ. Մահ.-Ստեփանեան, Դ. Բունեաթեան—25-ական կ., Ս. Բաբախանեան 5 կ., Ս. Էյվազեան 10 կ., Ս. Սաֆարեան 2 կ., Կ. Զոհրաբեան 3 կ., Յ. Յովսէփեան, Ս. Խաղատեան, Զ. Արզումանեան, Ն. Մանուկեան, Ս. Կարապետեան—5-ական կ., Պ. Խալաթեան 2 կ., Ա. Տէր-Ալէքսանդրեան 10 կ., Յ. Գիւլմսերեան 40 կ., Յ. Մկրտչեան, Ս. Կարօյան, Ս. Մանաֆիրեան, Ս. Մկրտչեան, Պ. Մնացականեան—5-ական կ., Ե. Առաքելեան 50 կ., Գ. Աթաբէգեան 20 կ., Մ. Յարութիւնեան 3 կ., Յ. Բաղալեան 13 կ., Յ. Արուչանեան 3 կ., Մ. Աւագեան 10 կ., Վ. Աղախանեան, Յ. Կիրակոսեան, Զ. Պողոսեան—5-ական կ., Ա. Արուչանեան 2 կ., Ս. Տէր-Գէորգեան 10 կ., Կ. Շահբազեան, Ն. Կարապետեան, Ս. Սուքիասեան, Գ. Մաչավարեան—2-ական կ., Դ. Գալստեան 5 կ., Յ. Սափարեան 7 կ., Ղ. Գրիգորեան 3 կ., Գ. Սարգսեան, Ս. Հայրապետեան—5-ական կ., Ս. Բարսեղեան 3 կ., Հ. Սաղոյեան, Ա. Խաչատրեան, Ղ. Սաքոյեան—5-ական կոպէկ։

Շարունակութիւն Կարսի վիճակի նուիրատուութիւնների։ 1) Յոբերան գիւղից—Գէորգ քահ. եւ եղբ. Յ. Աբրահամանց 2 ր. 20 կ., Մ. Մարգարեան 1 ր. 50 կ., Մ. Վարդանեան, Գ. Մկրտչեան, Ա. Մուրադեան, Յ. Շխարեան Մչեցի, Մ. Գէորգեան, Յ. Օհաննէսեան—60-ական կ., Գ. Մահ.-Սերոբեան 50 կ., Ա. Պետրոսեան 1 ր., Մ. Աւետիսեան, Մ. Նալբանդեան, Բ. Սուքիասեան, Յ. Մկրտչեան—30-ական կ., Օ. Գրիգորեան 25 կ., Թ. Պողոսեան, Ե. Սահակեան—20-ական կ., Օ. Մուրադեան 30 կ., Գ. Պողոսեան 15 կ., Նարկիզ 20 կ., Ռիփսիմա 25 կ., Յ. Մարտիրոսեան, Այրի Մարիամ—10-ական կ., Պ. Գրիգորեան, Գ. Մկրտչեան—25-ական կ., Օ. Աւետիսեան 10 կ., Ա. Կոստանեան 40 կ., Իր մայրն, Պողոս քահ.—15-ական կ., Ս. Յարութիւնեան 30 կ., Կին Մ. Մարգարեանի 20 կոպէկ։ 2) Շատեւան գիւղից—Հ. Մուրադեան 75 կ., Կ. Ղազարեան 37 կ., Թ. Աստատուրեան 39 կ., Ա. Տ.-Նիկողայոսեան 1 ր. 25 կ., Կ. Միհասեան 75 կ., Թ. Գրիգորեան 37 կ., Բ. Քերոբեան 39 կ., Գ. Տոնիկեան 18 կ., Յ. Տէր-Յոհաննէսեան 75 կ., Տ. Աշղեան 1 ր. 55 կ., Խ. Աշղեան, Ղ. Կարապետեան, Ս. Վարդանեան, Ղ. Գասպարեան—20-ական կ., Ս. Փիլոսեան 15 կ., Յ. Պողոսեան 75 կ., Յ. Յոհաննէսեան 15 կ., Ե. Քերոբեան 39 կ., Ն. Յոհաննէսեան 10 կ., Ա. Մուրադեան 18 կ., Մ. Վարդանեան 39 կ., Ս. Տ.-Մուքայէլեան 75 կ., Տ. Զախարեան 50 կ., Գ. Բարսեղեան 40 կ., Ա. Փիլոսեան 50 կ., Ն. Քերոբեան, Բ. Վարդանեան—12-ական կ., Տ. Մուրադեան, Ս. Գէորգեան—10-ական կ., Գ. Բաղդասարեան, Մ. Տ.-Մուքայէլեան, Յ. Թորոսեան, Ա. Տէր-Բաղդասարեան—12-ական կ., Մ. Փիլոսեան 15 կ., Թ. Գրիգորեան 5 կոպէկ։ 3) Սարի-Ղամիշ գիւղից—Մ. քահ. Աֆրիկեան, Ա. Նալբանդեան, Լ. Նալբանդեան, Թ. Ղարիբեան, Ա. Քիւչուկեան, Մ. Տ.-Մարուքեան, Մ. Իսահակեան, Ա. Դիւնիամալեան, Ա. Թօփչեան, Հ. Խաչատրեան, Խ. Պետրոսեան, Հ. Խաչատրեան, Ն. Թոփչեան, Շ. Բայաթեան, Վ. Տէր-Գրիգորեան, Ս. Խանամիրեան—1-ական ր., Ա. Աբգարեան 55 կ., Ա. Բէգլարեան, № №, Ե. Աղաջանեան, Թ. Տէր-Խաչատրեան—50-ական կ., Հ. Յակովբեան, Կ. Յակովբեան—40-ական կ., Շ. Պարոնակեան, Մ. Տէր-Խաչատրեան—30-ական կ., Ս. Քէչիչեան 25 կ., Ա. Անդրէասեան, Հ. Արաբաջեան, Ա. Կոստանեան, Տիր. Քէչիչեան, Ն. Ստամբոլցեան, Վ. Պարոնակեան, Հ. Պարոնակեան, Գ. Աֆրիկեան, Ն. Աֆրիկեան—20-ական կոպէկ։ Գաղթականներից—Արօնցի Պետրոս 65 կ., Մ. Պողոսեան, Դ. Պետրոսեան, Ա. Պողոսեան—50-ական կ., Մ. Գրիգորեան, Ս. Ենգոյեան—30-ական կ., Ղ. Թովմասեան. Բ. Առաքելեան—25-ական կ., Գ. Ասլանեան, Ա. Շահբազեան, Ս. Պողոսեան, Գ. Սահակեան, Կ. Վարդանեան, Ն. Կակոսեան, Զ. Շաբոյեան, Գ. Ենգոյեան—20-ական կ., Ա. Զաքարեան, Ե. Մկրտչեան, Պ. Խաչատրեան—50-ական կ., Ա. Ղեւոնդեան, Գ. Խաչոյեան, Ա. Պողոսեան, Մ. Սիմէօնեան, Վ. Նազոյեան, Տ. Տէր-Առաքելեան, Մ. Շաւօյեան, Մ. Յարութիւնեան—20-ական կ., Ս. Գրիգորեան, Գ. Խուրշուդեան—15-ական կ., Դ. Երանոսեան 10 կ., Լ. Սաֆարեան 3 կոպէկ։ 4) Գօր-Խանա գիւղից—Տէր Աբրահամ, Ս. Բատալեան—1-ական ռուբլի, Յ. Սարգսեան 60 կոպէկ, Ն. Առաքելեան, Հ. Սարգսեան—1-ական ռուբլի, Գ. Աբրահամեան, Յ. Տէր-Ալէքսանեան, Յ. Տ.-Մէլիքսեդէկեան, Ա. Յարութիւնեան—50-ական կ., Գ. Կարապետեան, Մ. Յակովբեան, Ա. Մնացականեան—40-ական կ., Ե. Յովսէփեան 50 կ., Մ. Մելքոնեան 1 ր., Ա. Մուրադեան 20 կ., Բ. Սարգսեան 50 կ., Ա. Վարդանեան 20 կ., Հ. Բալասանեան 50 կ., Մ. Յարութիւնեան 25 կ., Բ. Վարդանեան 10 կ., Ա. Այվազեան 20 կ., Է. Կարապետեան, Գ. Նազարեան—10-ական կ., Յ. Պետրոսեան 30 կ., Յ. Մկրտչեան, Յ. Զատիկեան, Մ. Զատիկեան—50-ական կ., Բ. Զատիկեան, Կ. Մկոյեան—40-ական կ., Զ. Տ.-Զատոյեան 20 կ., Հ. Մկրտչեան 5 կ., Խ. Յարութիւնեան 1 ր. 15 կ., Ա. Տէր-Պետրոսեան 50 կ., Ս. Մկրտչեան, Մ. Տէր-Մելքոնեան—Թ. Բարսեղեան 10 կ., Ս. Ստեփանեան 50 կ., Ս. Ծառուկեան 20 կ., Մ. Տէր-Պետրոսեան 15 կ., Խ. Խաչատրեան 8 կ., Մ. Մկրտչեան, Ս. Աւագեան, Կին ոմն—20-ական կ., Մ. Մարդարեան, Ս. Սարգսեան—5-ական կ., Գաղթական Պողոս 20 կոպէկ։

Ընդամենը 63 ռուբլի 99 կոպէկ։

Մինչեւ այժմ ստացել ենք 32,273 ր. 10½ կոպէկ, երեք ոսկի ռուպի եւ 50 իտալական լիրա։ Ուղարկել ենք 32,000 ռուբլի, 3 ոսկի ռուպի եւ 50 իտալական լիրա։ Մեզ մնում է 273 ր. 10½ կ.։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Իշխան-կառավարչապետի հրամանով կառավարչապետի խորհրդի անդամ իսկական պետական խորհրդական Կեստներին յանձնարարված է վերաքննել Թիֆլիսի նահանգական վարչութիւնը եւ նրան ենթակայ հաստատութիւնները։

—

Ռուսաց Կարմիր Խաչի ընկերութեան Մոսկվայի կանանց կոմիտէը մարտի 14-ին մի կոնցէրտ տուաց յօգուտ Ախալքալաքի գաւառում երկրաշարժից վնասվածների։ Կոնցէրտին, «Правит. Вѣстн.» ասելով, ներկայ էր եւ Մեծ Իշխանուհի Ելիզավետա Ֆեոդորովնան, որը բարեհաճեց հրամայել 5 հազար ռուբլի ուղարկել Թիֆլիսի նահանգապետին պալատական գրասենեակում պահվող նուիրատուութիւններից, որոնք նշանակված էին անբերրիութիւնից վնասվածների օգտին՝ նախապէս ստանալով նուիրատուների համաձայնութիւնը։

—

Ժողովրդական լուսաւորութիւնը Ռուսաստանում, նայելով այն վիճակագրական տեղեկութիւններին, որոնք պատրաստված են Պարիզի համաշխարհական ցուցահանդէսի համար, հետեւեալ չափերով է մեզ ներկայանում։ Քաղաքային, գաւառական, եկեղեցական-ծխական երկդասեան եւ II կարգի մասնաւոր ուսումնարանների թիւը հասնում է 1,900-ի, իսկ քաղաքային տարրական, գիւղական, համայնական, եկեղեցական-ծխական միդասեան, մինիստրական միդասեան եւ մասնաւոր III կարգի ուսումնարանների թիւը—մօտաւորապէս 80,000-ի 4,000,000 ուսանողներով։ Արական կլասիքական դպրոցները 191 են, արական պրոգիմնազիաները—53, բէալական դպրոցները—115, իգական գիմնազիաները եւ պրոգիմնազիաները 408 եւ կանանց թեմական ուսումնարանները 60։ Զինուորական միջնակարգ ուսումնարանների թիւը հասնում է 30-ի։

—

Խմբագրութեան մէջ ստացվեց վրացերէն լեզուով «Գ. Ծերէթէլի (1842—1900)» վերնագրով գրքոյկը։ Գրքի մէջ ամփոփված են «Կվալի» շաբաթաթերթի նախկին խմբագրի կենսագրութիւնը, այն ճառերն ու ոտանաւորները, որոնք տեղի են ունեցել թաղման հանդէսին, հեռագիրներ, որոնք ստացվել են խմբագրատանը մահվան առիթով եւ օտար լրագիրների կարծիքը հանգուցեալի գործունէութեան մասին։

—

Զորեքշաբթի, մարտի 21-ին, վրաց ազնուականների թատրոնում, հայ դերասանական ընկերութիւնը խաղաց առաջին անգամ Ա. Գնունու «Վաշխառու» անունով 5 գործ. դրաման։ Այդ պիեսի մասին կը խօսենք մի ուրիշ անգամ։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Տէրտէրական վէճերը, որոնք այժմ մի համատարած չարիք են կազմում մեր կեանքի մէջ, Շուշում էլ կային, բայց առանձնապէս սաստկացան այն օրից, երբ Ղարաբաղի ահագին թեմը մնաց առանց առաջնորդի եւ յանձնվեց մեր տէրտէրների կամայականութեան։ Ներկայումս մեր քաղաքի Մեղրեցոց եկեղեցու ժողովուրդը կեղեքվում է մի խառնակութիւնից, որի հեղինակն է Խանքեանդի աւանի Պետրոս քահանան։ Երկու խօսքով այսպէս է այդ խառնակութեան պատմութիւնը։ Մինչեւ ձեռնադրվելը, այսինքն այն ժամանակ, երբ մեծաւորների դռները մաշող մի հեղ տիրացու էր այդ քահանան, Խանքենդին նրա համար աւետեաց երկիր էր եւ այնտեղ քահանայանալու միտքը նրան շատ եւ շատ բաւարար էր թուում։ Բայց այդ տեղը ստանալուց յետոյ՝ սկսեց ամեն ներելի եւ աններելի միջոցներ գործ դնել քաղաքում հաստատվելու համար։ Սակայն նրան ճանաչում են («Մշակի» ընթերցողներն էլ ծանօթ են այդ տէրտէրի հետ) եւ չեն ուզում կատարել նրա շատ հականալի տենչանքը. առաջվայ փորձերը անաջող անցան, բայց այդ չէ նշանակում թէ էլի չը պէտք է փորձել։ Իսկ նոր փորձի համար ամենայարմար ժամանակը հէնց այն անտերութիւնն է, որի մէջ այժմ գտնվում է Ղարաբաղի թեմը։ Օգտվելով այն հանգամանքից, որ տեղական կոնսիստորիայում տէրտէրների թագաւորութիւն է, քահանան առաջ է քաշել քաղաք տեղափոխվելու իր աղաչանքը։ Էջմիածինը խիստ արգելել է քահանաների տեղափոխութիւնը, բայց այս անգամ Պետրոս քահանային տրամադիր է տեղափոխել, եթէ ժողովուրդը համաձայնութիւն տայ։ Ժողովուրդը չէ կամենում, բայց ինտրիգներով, խոովութիւններով ուզում են մի կերպ դրան այդ բանը, այսինքն ուզում են մեծամասնութեան ձայնը խեղդել։ Իսկ ժողովուրդը, պէտք է ասել, միանգամայն ձանձրացել է կղերական կամայականութիւններից եւ չը գիտէ թէ ինչպիսի լինի լոկ գրպանասիրութիւնից առաջացող այս խռովութիւնների, ապօրինութիւնների վերջը։ Պատրաստվում է բողոք, թէեւ բողոքների գինն էլ պարզված է միանգամայն։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՎԷՅՑԱՐԻԱՑԻՑ

—

Ժընէվ, մարտի 26-ին

Անարդարութիւն կը լինէր մասնակից չանել հայ ընթերցողներին այն սրտաբուղխ համակրութեան, որ ազատ Շվէյցարիան ցոյց է տալիս ազատութեան համար կռուող բօէրկնոջը։

Բաւական է մի քանի րօպէ կանգ առնել լրագրավաճառ-խանութների մօտ, ուր սովորաբար ի ցոյց են դրվում պատկերազարդ հանդէսները, ստացված Ֆրանսիայից, Գերմանիայից եւ նոյն իսկ Անգլիայից, որպէսզի դի դուք իսկոյն նկատէք, թէ ինչ բերկրութեամբ է լցված ժընէվցին, դիտելով պատերազմի հերոսուհիների տխուր, բայց վճռական դէմքերը, խումբ խմբի ետեւից, կանայք, երեխաներ, բանուորներ, պրոֆէսորներ՝ բոլորն էլ պարաք են համարում կանգ առնել, նայել թէ ինչ են հաղորդում պատկերազարդ հրատարակութիւնները, ոչ մի առիթ բաց չը թողնելով՝ անսասման բերկրանք արտայայտելու դէպի Նահատակ ժողովրդի անձնուէր կանայք։ Նայեցէք դիտողների դէմքին, նրանց վրա կարծէք նկարված է պատմական նշանաւոր խօսքը՝ Gloria victis։

ժատած կենդանի քաղաքի հետ։ Այն ինչ մեռելներն աւելի են շատ, քան կենդանիները։ Մեզ հարկաւոր են մեծ տներ, փողոցներ, այնքան տեղ, այն չորս սերնդի համար, որոնք միաժամանակ նայում են արեգակին, խմում են աղբիւրների ջուրը, այգիների զինին եւ ուտում են դաշտերի հացը։

Իսկ մեռելների այդ բոլոր սերունդների համար—ամբողջ մարկային սանդղակի համար—որ հասնում է մեզ, մի փոքրիկ դաշտ է, համարեա ոչինչ։ Հողը յետ է առնում նրանց, իսկ ժամանակ ջնջում է մարդկանց յիշողութիւնից։

Նոր գերեզմանատան կողքին ես տեսայ յանկարծ մի ուրիշ մոռացած, հին հանգստարան, որտեղ հին մեռելները խառնվում էին հողի հետ, ուր խաչերն արդէն փտած էին եւ ուր վաղը պիտի դնեն նոր մեռելներ։ Գերեզմանոցը լի էր վայրի վարդերով, հաստաբուն ու սեւ նոճիներով. մռայլ ու հրաշալի այգի, որ պարարտացած ես մարդկային մսով։

Միայնակ էի, բոլորովին միայնակ։ Ես թաղնվեցի կանաչ ծառի տակ, նրա մութ ու խիտ ճիւղերի մէջ։

Եւ սպասում էի ծառի ընին կպած, ինչպէս խեղդվողը բռնում է փշրված նաւի բեկորից։

Երբ մութ խաւարը բռնեց, դուրս եկայ դաբանից եւ համրաքայլ անցայ այդ մեռելաշատ տեղով։

Ման էի գալիս երկար, շատ երկար եւ չէի կարողանում գտնել նրան։ Ես գնում էի աչքերս չռած, ձեռքերս տարածած, ոտքերս, կուրծքս, ձեռքերս ու նոյն իսկ գլուխս դիպցնելով գերեզմաններին։ Կոյրի նման չոչափում էի ես քարերը, խաչերը, գերեզմանների ցանկապատերը, յախճապակէ ու թորչոմած ծաղիկներով պսակները, կարդում էի նրանց վրայի անունները, մատներովս տառերը չոչափում, սակայն չէի կարողանում գտնել։ Ի՞նչ գիշեր. ինչ գիշեր էր։ Լուսին չը կար։ Ի՞նչ գիշեր էր։ Ահը բռնեց ինձ, անասելի ահը, այդ նեղ շաւիղներում, որի երկու կողմից գերեզմաններ էին շարված։ Գերեզմաններ, գերեզմաններ, գերեզմաններ. ամենուրեք գերեզմաններ։ Աջ, ձախ, առաջս ու շուրջս ամեն տեղ գերեզմաններ։ Ես նայեցի նրանցից մէկի վրա, այլ եւս մէջս ոյժ չէր մնացել առաջ գնալու, ոտներս ծալվում էին։ Լսում էի, թէ ինչպէս տրոփում է սիրտս եւ ուրիշ մի ինչ որ բան. մի ինչ որ մութ ու անորոշ չշուկ։ Արդեօք դա իմ խելագար գլխիս ձայնն էր այդ խաւար գիշերին, թէ լսվում էր այդ խորհրդաւոր տեղից, ուր ցանված էին մարդկային դիեր։ Նայեցի շուրջս։

Ո՞րքան ժամանակ մնացի այդպէս, չը գիտեմ։ Ես շշմած, հարբած էի երկիւղից ու ահից։ Այդ վայրկեանին ես պատրաստ էի մռնչալ, գոռալ, մեռնել։

Եւ յանկարծ ինձ թւաց, թէ մարմարէ սալը, որի վրա նստած էի, շարժվեց, կարծես բարձրանալիս լինէր։ Ես ինձ նետեցի հարեւան գերեզմանի վրա եւ տեսայ, այո, տեսայ, որ այն քարը բարձրանում է։

Երեւաց մի մեռել, մի կմախք, որը իր կորացած մէջքով բարձրացրեց քարը։ Տեսայ, շատ լաւ տեսայ, չը նայած որ գիշերը մութ խաւար էր եւ խաչի վրա էլ կարդացի. «Այստեղ թաղված է Ժակ Օլիվանը, որ մեռաւ 51 տարեկան հասակում։ Նա սիրում էր իր մտերիմներին, ազնիւ էր ու բարի եւ խաղաղութեամբ հեռացաւ դէպի Բարձրեալը։»

Մեռելը նոյնպէս կարդաց իր գերեզմանի վրա գրած խօսքերը. ապա ճանապարհից վերցրեց մի փոքրիկ սրածայր քարի կտոր ու սկսեց դրանով քերել ամբողջ գրուածքը։ Նա արձանագրութիւնը բոլորովին մաքրեց, նայեց իր դատարկ աչքերով այն տեղ, ուր գրուածքն էր եւ իր ցուցամատ ոսկորի ծայրով գրեց փայլուն տառերով, նման այն փայլուն գրութիւններին, որ գծում են պատերին ֆոսֆորի լուցկիով. «Այստեղ թաղված է Ժակ Օլիվանը, որ մեռաւ 51 տարեկան հասակում։ Սա իր կոպտութիւններով արագացրեց հօր մահը, որ ստանայ նրա ժառանգութիւնը։ Սա սպառնալիքներով մաշում էր կնոջը, տանջում էր զաւակներին, խաբում ընկերներին, գողանում օրքան չնորք ունէր եւ մեռաւ առանց ապաշխարելու։»

Վերջացնելով գրելը, մեռելը զմայլում էր իր չարագրածով եւ ես դիտելով՝ նկատեցի, որ բոլոր գերեզմանները բացվել էին, մեռելները վեր էին կացել տեղերից եւ ջնջում էին գերեզմանների կեղծ արձանագրութիւնը ու վերականգնում ճշմարիտը։ Եւ տեսայ, որ այն բոլոր բարի հայրերը, հաւատարիմ ամուսինները, անձնուէր տղաները, ողջախոհ աղջիկները, ազնիւ վաճառականները, այդ բոլոր անարատ կոչված մարդիկ ու կանայք, ամենքն էլ իրանց մտերիմների համար եղել են դահիճ, չար, խաբեբայ, կեղծաւոր, չողոքորթ, նախանձոտ, եւ կատարել են ամեն տեսակ ստրութիւն ու լրբութիւն։

Մտածեցի, որ նա էլ իր գերեզմանի վրա պիտի գրի ճշմարիտը. եւ այժմ անվախ վազում էի դէպի նրան, բաց դագաղների մօտից մեռելների ու կմախքների մէջտեղով. վազում էի, համոզված, որ շատ շուտով պիտի գտնեմ նրան։

Հեռուից ճանաչեցի նրան, դէմքը ծածկված էր սաւանով։ Եւ մարմարէ խաչի վրա, որ մի քիչ առաջ կարդացել էի. «Նա սիրում էր, սիրված էր ու մեռաւ». ես տեսայ գրած. «Մի անգամ դուրս գալով տանից, որ խաբէ սիրեկանին, անձրեւի տակ ընկաւ, մրսեց ու մեռաւ։»

Վաղ առաւօտ գերեզմաններից մէկի վրա ինձ գտան անզգայ։

Ա. Ղազարեան

Եւ կարելի է միթէ, ճշմարիտ, անտարբեր մնալ եւ չը փառաբանել այն ազիրիկական ըսպարտուհիներին, որոնք իրանց հերոսական քայլերով՝ ոգեւորութեան մի մի անսպառ աղբիւր են հանդիսանում յուսահատ կուռղների համար։ Ահա, օրինակ, մի պատկեր, որ ներկայացնում է կնոջը՝ անբաժան մասնակից զինուորական բանակի բոլոր տանջանքներին։ Ահա մի այլ նկար, որտեղ կինը՝ կրակի եւ ծուխի մէջ, փամփուշտներ է մատուցանում կուռղ ամուսնուն, կամ ջահիլ-քոյրը՝ ծնկաչոք՝ վիրաւոր եղբօր վերքն է կապում, տաք համբոյրներ դրոշմելով նրա հպարտ, բայց արդէն գնդակահար ճակատին։ Ահա մի երրորդ պատկեր, որտեղ երիտասարդ կինը, հաղիւ մի քանի ամսվայ ամուսնացած, դէպի կուռ դաշտն է ճանապարհում իր սիրեկան մարդուն, ոգեւորելով նրան անզուսպ խօսքերով, հայրենասիրական կրակոտ քարոզներով։ Կամ մի պատկեր, ուր գլորվող տղամարդի ձեռքից նրա հրացանը խլելով բօէրուհին, հերարձակ, գազանացած դէմքով, գնտակներ է ուղղում անթիւ թշնամու գնդին. եւ կամ ինչպէս՝ հակառակ վտանգի եւ գնտակների տարափին՝ ուրա է գոչում ամեն անգամ, երբ ռումբը պայթում է թշնամու բանակում...

Եւ այդ սրտաճմլիկ, հերոսական փաստերի դիմաց՝ մինչեւ այսօր գոնէ՝ չը գտնվեց Մեծ-Բրիտանիայում անգլուհիների մի խումբ, մի ընկերութիւն, մի շրջան, որ բողոք բարձրացնէր Զէմբերլէնեան ամօթալի պատերազմի դէմ, եւ յանուն անգլիական փառաւոր պատմութեան՝ հրաւէր կարդար վերջ տալ այդ կուռին։ Ընդհակառակն, անգլիացի կանայք, որոնք չատ հեռու են պատերազմի դաշտում հերոսանալու քաջութիւնից, վայելելով, օրինակ, Շվէյցարիայի խաղաղ կեանքը՝ նրա բնութեան գեղեցկութիւնների հետ միասին, ինչպէս այստեղ պատմում են, միմեանց չնորհաւորական հեռագիրներ են ուղարկում, աւետելով իրանց զօրքերի ձեռքով կատարված նոր անգթութիւնները։ Անգլիացի օֆիցէրները եւ զինուորները մասնաւոր նամակներում երկինք են բարձրացնում բօէր կնոջ մարդասիրութիւնը, նկարագրելով թէ ինչպէս նրանք մայրական սիրով խնամք են տանում նոյն իսկ անգլիացի վիրաւորների մասին, իսկ անգլուհիները հրճվում են, եւ հեռագրական չնորհաւորութիւններ են ուղարկում միմեանց, երբ լսում են, որ էլի մի խումբ բօէրներ կոտորվեցին, էլի մի քանի բօէր-կանայք եւ պատանիներ սպանվեցին, կուռելով իրանց հայրենիքի անկախութեան եւ ազատութեան համար։ Ահա թէ ինչումն է մի մեծ ազգի փոքրութիւնը եւ մի փոքրիկ ազգի մեծութիւնը...

Այդ տեսակ՝ գուցէ երկրորդական, բայց բնորոշ փաստերն են ահա, որ օրէցօր աւելի եւ աւելի խոր են դարձնում այն հակակրութիւնը, որ սկսված է այստեղ դէպի անգլիացիները։ Նորերս ես առիթ ունեցայ ներկայ լինելու մի մեծ միտինգի, որը միջազգային բնաւորութիւն ունէր, կազմված լինելով բոլոր ազգերի բազմաթիւ ներկայացուցիչներից։ Եւ երբ ճառախօսներից մէկը, խօսելով կապիտալիստական ձեռնարկութիւնների մասին, յանկարծ յիշատակեց անգլո-տրանսվալեան կռիւը, ասելով, որ դա ազատագրական պատերազմ չէ, այլ շահամոլ-ավանտիւրիստների սարքած մի գործ, ամբողջ դահլիճը, կարծէք էլեքտրականութեամբ բռնված, թնդաց անսովոր ծափահարութեամբ, մի բուռն ցոյցով «քաղաքակրթող» Անգլիայի դէմ։ Եւ եթէ այդ ժողովում կային եւ անգլիացիներ, նրանք դուրս եկան դահլիճից՝ տանելով իրանց սրտի խորքում այն դառն համոզումը, որ երէկվայ համակրելի Անգլիան այսօր դարձել է ատելութեան առարկայ բոլորի համար, առանց խտրութեան որ եւ է ազգութեան։

Մի քանի ամիս առաջ բրիտանական կառավարութիւնը, պատերազմ սկսելով, յայտարարեց, որ ինքը նուաճողական դիտումներ չունի եւ չի ոչնչացնի երկու փոքրիկ հանրապետութիւնների գոյութիւնը։ Ամենքը հաւատ ընծայեցին այդ խօսքերին, բացի բօէրները։ Կրիւգէր մինչեւ անգամ մի ճառի մէջ ասաց, որ «Անգլիան, հաւատարիմ իր անցեալին, այս անգամ էլ կը դրժէ իր խոստումը»։ Եւ, տարաբաղդաբար, այդ գուշակութիւնը այժմ արդարանում է։ Անգլիացիները լսել անգամ չեն ուզում Օրանժի եւ Տրանսվալի անկախութեան մասին։ Հայրենիքի համար կուռող քաջերը բռնվում, բանտարկվում եւ պատժվում են իբրեւ ստոր դաւաճաններ։ Եւ գեներալ Բօբէրտս, Օրանժի մայրաքաղաքում բանկէտներ կազմելով, ժպիտը երեսին յայտարարեց, որ յոյս ունի «յաջորդ բանկէտը կազմել Պրէտորիա, Տրանսվալի մայրաքաղաքում»։ Ապա ուրեմն այս կռիւը, նոյն իսկ լաւ անգլիացիների կարծիքով, մի «տխուր պարտաւորութիւն» չէ՝ անգլիական զէնքի պրեստիժը բարձր պահելու համար, այլ մի ուրախալի առիթ, նոր-նոր երկիրներ նուաճելու, կամ աւելի պարզ ասած՝ ամբողջ Աֆրիկան գրաւելու համար... Նորանոր դէպքերը, տարաբաղդաբար, աւելի են հաստատում այս տխուր ճշմարտութիւնը։ Ներկայ ամսթալի պատերազմով Անգլիան դուրս եկաւ իր քաղաքակրթող դերից, եւ այժմ շատ դժուար, նոյն իսկ անհնարին է որ եւ է պաշտպանողական խօսք ասել նրա հասցէին։ Բօէրների վերջնական ջարդը կը լինի՝ մի նոր յաղթանակ կոպիտ, բռնի ոյժի համար, եւ այդ պատճառով հասկանալի պիտի լինի, թէ ինչու անգլիական զօրքի ամեն մի աջողութիւնը միայն վիշտ է պատճառում ամբողջ Շվէյցարիայում, ուր արդէն նորից սկսել են պետիցիաներ կազմել՝ խաղաղութիւնը վերահաստատելու համար։

Խ. Մալումեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Փոքր-ասիական նահանգներից գրում են Կ. Պոլսի լրագիրներին, թէ բազմամեայ տանջանքները եւ ծայրահեղ աղքատութիւնը այնպէս մեռցրել են հայերի մէջ կրօնական զգացմունքը, որ մինչեւ անգամ տգէտ գիւղացու մէջ սկսել է անհաւատութեան հակումն երեւալ։

—Աւղանստանի էմիր Աբդուրահմանին վերագրում են հետեւեալ կարծիքը անգլիացիների մասին, որ նա իբր թէ ասել է անգլիական կառավարութեան ներկայացուցիչներից մէկին։ Խօսքը օրվայ չարիքի՝ հարաւ-աֆրիկական պատերազմի մասին էր. «Դուք, անգլիացիներդ,—ասաց էմիրը—ներս խուժեցիք Տրանսվալ, մշակեցիք նրա հանքերը, զարգացրիք երկրի հարստութեան աղբիւրները եւ բանը վերջացրիք նրանով, որ ձեզ համարեցիք Տրանսվալի տէրը։ Դրանից յետոյ դուք փորձ արիք վերջնականապէս տիրապետել նրան։ Բոլորովին նոյն բանը կը պատահէր, եթէ ես ներս թողնէի ձեզ Աւղանստան մեր հանքերը մշակելու եւ մեր առեւտուրը զարգացնելու համար։ Դուք իսկոյն կը սկսէիք պատմել մեզ, թէ դուք աւելի լաւ գիտէք մեր գործերը, քան թէ մենք։ Մի բարի օր կը սպանվէր որ եւ է անգլիացի կամ մի այլ այդպիսի բան կը պատահէր եւ դուք օգուտ կը քաղէիք դէպքից միջամտելու եւ տիրելու իմ երկիրը... յանուն քաղաքակրթութեան։

—«Francfurter Zeitnng» հաղորդում է Թաւրիզից ստացած մի տեղեկութիւն, թէ այնտեղ գնացել են ռուս ինժենէրներ, որպէս զի հետազօտութիւններ անեն պարսկական Ադրբէջան նահանգի հիւսիս-արեւմտեան մասում ապագայ երկաթուղու համար։ Ասում են, թէ Խոյ քաղաքից երկաթուղային գծեր կը տարվեն դէպի զանազան կողմեր։ Թիֆլիս-Երեւան-Թաւրիզ-Թէհրանի երկաթուղին կանցնէ ռուս-պարսկական սահմանի վրա գտնվող Շահ-Թախտի մօտով եւ այնտեղից կը գնայ դէպի Խոյ։ Ճանապարհի մնացեալ շարունակութիւնը դեռ եւս վերջնականապէս որոշված չէ։ Պարսկաստանում մեծ յոյս են դնում նոր երկաթուղային գծի վրա եւ կարծում են, որ նա մեծապէս կը նպաստէ Ադրբէջանի տնտեսական զարգացմանը։ Խոյ քաղաքը այդ ճանապարհի միջոցով մեծ նշանակութիւն կը ստանայ այդ նահանգի արդիւնաբերութեան եւ առեւտրի համար։ Ռուսաստանը, ի հարկէ, կաշխատէ ընդարձակել իր առեւտրական յարաբերութիւնները Պարսկաստանի հետ եւ հէնց այդ նպատակով Թաւրիզ է եկել ռուսաց ֆինանսների մինիստրութեան մի ատիճանաւոր, որին յանձնարարված է քննել ռուս-պարսկական առեւտրի այժմեան վիճակը եւ յարաբերութիւն սկսել Թաւրիզի առեւտրական շրջանների հետ։

—Բարոնուհի Հիրշ 4,000,000 ֆրանկ է կտակել յօգուտ Պարիզի հրէական դպրոցի, 5,000,000 ֆ. Պարիզի բարեգործական կօմիտէներին, 500,000 ֆ. «մնուրքի» ընկերութիւններին, 1,000,000 յօգուտ հրէական գաղթականական ընկերութեան, 1,000,000 ֆ. Հիրշի դպրոցին եւ այլ գումարներ յօգուտ զանազան բարեգործական հիմնարկութիւնների։

—«Արեւելքի» մէջ կարդում ենք. «Հաղիւ թէ Էրզրումի դաւանափոխութեան հոսանքին առաջքը առնուած ըլլալը ծանուցած էինք սրտի բերկրութեամբ, նոր դաւանափոխութեան մըն ալ լուրը կը հաղորդէ Սղերդի մեր թղթակիցը՝ իր հետեւեալ նամակով. Սղերդ, 17 փետրվարի. «Նախորդ շաբթուն, երկու աշխարհականներէ բաղկացեալ պատուիրակութիւն մը Պիթլիսէ Սղերդ գալով, տեղիս Դոմինիկեաններուն ներկայացուց հանրագրութիւն մը՝ որով խել մը ազգայիններ,—մօտաւորապէս 200 անձ,—ընտանիքով լատին կրօնքը ընդունելու փափաք յայտնելով, քահանաներ կուզեն։ Այս դաւանափոխութեան գլխաւոր շարժառիթը, ինչպէս կը զրուցուի, ոչ միայն հացի խնդիրն է, այլ եւ տեղին առաջնորդն ու ժողովական աղաները՝ որոնք անտարբեր ու անողոքելի կը գտնուին եղեր անոնց եկեղեցական ու դպրոցական պէտքերուն հանդէպ։ Կըսուի թէ, հանրագրութիւնը ստորագրողներէն զատ տակաւին ստուար թուով ժողովուրդ կան մի եւ նոյն տրամադրութեամբ։ Մենք մեր կողմէ զրուցուածին վրա առանց բառ մը աւելացնելու կամ այդ մասին թեր ու դէմ կարծիք յայտնելու, միայն սաչափ կըսենք.—Քանի որ մատուցուած հանրագրութիւնը նոյնութեամբ ներկայ թղթատարով կը ղրկուի Մուսուլ՝ ի նկատառութիւն Անատօլուի Դոմինիկեան տեսչութեան, հետեւապէս բաղէչցիք դեռ խորհելու բաւական ատեն ունին, հոգ չէ թէ ծանօթ հանրագրութիւնը ստորագրելու ստգտանքին մէջ գտնուած են, նոյնպէս ապագայ մեծ պատասխանատուութենէ մը կրնայ խուսափիլ Բաղէշի առաջնորդարանը՝ սիրաշահելով ժողովուրդը եւ դաւանափոխութեան հոսանքին առաջքը առնելով»։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

22 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մարտի 22-ին Նոցա Մեծութիւնները այցելեցին հետեւակ զօրքի իւնկերների ուսումնարանը։

Մարտի 22-ին Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆեոդորօվնան այցելեց կանանց ազգասիրական ուսումնարանը յանուն Պետր Գէօրգիեվիչ Օլդէնբուրգսկու։

Մարտի 22-ին Պետերբուրգ եկաւ բօլգարական զինուորական մինիստր գնդապետ Պապրիկով։

ԲԼՈՒՄՖՕՆՏԷՆ։ Կօլվելի դիվիզիան եւ Ֆըրէնչի հեծելազօրքը վերադարձան այստեղ։ Ամեն ինչ խաղաղ է։ Զրանցքի քանդումը մեծ անյարմարութիւններ կը պատճառէ. պէտք է ստիպվենք ջուրը խնայողաբար գործ ածել լոգանալու համար, բայց խմելու ջուրը առատ է։

ԼՕՆԴՕՆ։ «Times»-ին հաղորդում են Լօրենցօ-Մարկեզէից, թէ, նայելով լուրերին, հինգշաբթի օրը Բանդայի բոլոր հանքերը Տրանսվալում փակված են։ Այնտեղ աշխատող անգլիացի բանւորները, նոյնպէս եւ ուրիշ անգլիացիներ, նրանց հետ եւ բանկերում ծառայողները, ուղարկված են հանրապետութեան ուրիշ մասերը։

«Times»-ին հեռագրում են Բլումֆօնտէնից. «Թշնամու շարժումը ցոյց է տալիս, որ նա այժմ ոգեւորված է. մի եւ նոյն ժամանակ դա ապացոյց է, որ Օրանժեան հանրապետութեան հիւսիսային մասում բօէրները աւելի բազմաթիւ են քան ենթադրվում էր։ Օլիվիէի գործողութիւնները, որ նորից գնաց դէպի արեւելք եւ գրաւեց Լէդի-Բրանդ, իսկ յետոյ, հաւաքելով իր մօտ օգնական զօրքեր, տիրեց Տաբանչուին, ռազմագիտական «գլուխ գործոցներ» էին, որովհետեւ նա կարողացաւ օգուտ քաղել Բօէրտսի զօրքերի տեղաւորման միակ թոյլ կէտից։ Այս հանգամանքը ցաւալի է, գլխաւորապէս այն տեսակէտից, որ մենք անընդունակ գտնվեցինք կատարելապէս պաշտպանել հանրապետութեան հարաւ-արեւելեան մասում այն ագարակատէրերին, որոնք արդէն յանձնել են իրանց զէնքերը։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողովում քննադատվում էր Գիդդերվիկի առաջարկը, որ ցանկալի էր համարում գաղթականութիւնների կողմից ներկայացուցիչներ ունենալը պետական պարլամէնտում։ Զիմբերլէն առարկում է, թէ այդպիսի ցանկութիւն պէտք է յայտնեն իրանք գաղթականութիւնները։ Կասկած չը կայ, որ գաղթականութիւնների ամեն մի ցանկութիւն կը կշռադատվի պարլամենտում բարեկամական զգացմունքով, բայց մինչեւ այժմ ոչ մի գաղթականութիւն չէ արել որ եւ է քայլ, որ համապատասխան լինէր Գիդդեթվիկի առաջարկին։ Ահա թէ ինչու, որքան էլ ցանկալի լինէր առաջարկութեան նպատակը, նրա քննադատութիւնը վաղաժամ է եւ դա կարող է վնաս հասցնել միայն գործին։ Գաղթականութիւնները ամենեւին չեն հաշտվի այն մտքի հետ, թէ պարլամենտում ներկայացուցչութիւն ստանալու փոխարէն, նրանք պէտք է հրաժարվեն անկախութիւնից, պարտաւորվեն զինուորական ծառայութեան բեռի տակ մտնել Անգլիայի համար եւ վճարել անգլիական հարկերը։ Միւս կողմից՝ պարլամէնտում քուէարկութիւնների ժամանակ նրանք վճռական ձայն կը ստանան։ Ճառախօսը վերջացրեց իր ճառը կասկած յայտնելով, թէ կարող են եւ ֆինանսական դժուարութիւններ ծագել։ Դրանից յետոյ առաջարկութիւնը յետ առնվեց։

ԼԻՍՍԱԲՕՆ։ Պատգամաւորների ժողով։ Արտաքին գործերի մինիստրը յայտնում է, թէ պօրտուգալական տիրապետութիւնների միջով զօրք եւ ռազմամթերք տեղափոխելու համար անգլիական կառավարութիւնը նախապէս թոյլտուութիւն էր խնդրել եւ Պօրտուգալիան տուել էր իր համաձայնութիւնը, որ Անգլիան օգուտ քաղէ այդ պետական դաշնադրութիւններով ճանաչված իրաւունքից։

ԼՕՆԴՕՆ։ Սառաւօտեան լրագիրներում տպված է մի հեռագիր Կապչտադտից, թէ գեներալ Կրոնիէ, գնդապետ Շիլ եւ 1,000 բօէր գերիներ ուղարկվեցին ս. Հեղինէ կղզին։

23 մարտի

ԲՐԻՍԷԼ։ Հիւսիսային երկաթուղու այստեղի կայարանը հասնելուց յետոյ Ուէլսի իշխանի վրա բէվօլվէր արձակեց մի անծանօթ մարդ։

ՊՐԷՏՕՐԻԱ։ Մարտի 20-ին հրատարակվեց կառավարութեան ծանուցումը՝ թէ Եօհաննէսբուրգի, Բօկբուրգի եւ Կրիւգէրսդօրպի բոլոր բնակիչները պարտաւոր են հեռանալ երկրի սահմաններից 48 ժամվայ ընթացքում։ Մնացած բոլոր ընտանիքաւոր մարդիկ նոյնը պէտք է անեն մինչեւ մարտի 23-ը։ Այդ հրամանը չէ վերաբերում բրիտանական այն հպատակներին, որոնք աշխատում են պետական հանքերում։

ԴՈՒԲԼԻՆ։ Թագուհին ժամանեց այստեղ, եւ նրան մեծ հանդէսով դիմաւորեցին քաղաքից դուրս լորդ-մէրը, որը մի ճառ արտասանեց՝ բարի գալուստ մաղթելով։ Թագուհին պատասխանեց, թէ իրան մեծ գոհունակութիւն է պատճառում այն բանը, որ ինքն հնարաւորութիւն ունի նորից այցելել այդքան փառաւոր մարդկանց հայրենիքը։

ՍՊՐԻՆԳՖՕՆՏԵՆ։ Հիմք կայ կարծելու, որ թշնամու զօրքերի մեծ թիւ հեղեղում է Սպրինգֆօնտէնի եւ Բլումֆօնտէնի միջեւ եղած միացնող երկաթուղու գծի մօտ գտնվող տեղը։ Գեներալ Գատէկր պատրաստվում է դիմադրել թշնամու ամեն մի փորձին՝ կտրել Բօբէրտսին հաղորդակցութեան գծից։

ԲՐԻՍԷԼ։ Ուէլսի իշխանը ժամանեց այստեղ ոչ թէ Օստենդէից, այլ Կալէից եւ գտնվում էր այն գնացքի մէջ, որը պէտք է ճանապարհ ընկնէր Կեօլն, երբ տեղի ունեցաւ սպանութեան փորձ։ Զարագործը, կանգնած վագոնի սանդուղքի վրա, երկու անգամ բէվօլվէր արձակեց սալօն-վագոնի փակ պատուհանի վրա։ Իշխանի կողքին գտնվում էր նրա ամուսինը. այդտեղ էր եւ նրա թիկնապահը ոչ-զինուորական հագուստով։ Զարագործին անյապաղ ձերբակալեց ոստիկանական օֆիցէրը, իսկ քննութեան ենթարկեց երկաթուղու գլխաւոր տեսուչը։ Բէվօրվէր արձակողը 16 տարեկան մի արհեստաւոր է, Սպիդօ անունով. նա ապրում էր Բրիւսսէլի արուարձանում։ Նրա գրպաններում գտնվեցին անարխիական բազմաթիւ թղթեր։ Նա յայտնեց, թէ դիտաւորութիւն ունէր սպանել իշխանին։ Ոչինչ խղճահարութիւն նա չէ զգում եւ պատրաստ էր նորից սպանութեան փորձ անել, եթէ կարելի լինէր։

ԲՐԻՍՍԷԼ։ Ուէլսի իշխանը արտակարգ գընացքով Կալէից ժամանեց 4 ժամ 15 րոպէին եւ մօտ կէս ժամ մնաց գալիս կայարանի գլխաւոր դահլիճում իր երկու քարտուղարների ուղեկցութեամբ, իսկ յետոյ 5 ժամ 15 րոպէին ճանապարհ ընկաւ Կեօլն։ Երբ հրացանաձգութեան ձայնը լսվեց, գնացքը անյապաղ կանգ առաւ։ Հասարակութեանը մեծ յուզմունք տիրեց։ Իմացվեց, որ ոչ իշխանը, ոչ էլ ուրիշ մարդ վիրաւորված չեն։ Կայարանապետը վազեց եւ խփեց չարագործի ձեռքին, նախ քան նա երրորդ անգամ կարձակէր բէվօլվէրը։ Երկուսի մէջ կռիւ սկսվեց։ Զարագործը աշխատում էր ազատվել նրանից։ Մի քանի մարդիկ օգնութեան հասան, զինաթափ արին եւ կապոտեցին։ Իշխանը երկու անգամ երեւաց վագոնի պատուհանի մօտ եւ հարցրեց թէ արդեօք չարագործը կալանաւորված է։

ԲԵՐԼԻՆ։ Ռուսաց դեսպանութեան մէջ տեղի ունեցաւ ճաշ, որին ներկայ էր կայսրը։ Ճաշին ներկայ էին նոյնպէս կայսերական կանցլերը, պետական-քարտուղար Ֆօն-Բիւլօվ, Բէրլինի դեսպանը, գեներալ Գանկէ, Լուկանուս եւ ծովապետ Սենդէն, գլխաւոր բանակի պաշտօնեաները, օբէր-հոֆմարշալ կոմս Էյլէնբուրգ, դեսպանութեան անդամները եւ այլն։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

№ 1 գնացքը:		№ 3 գնացքը:	
Բաղուից դուրս է գալիս	ցեր. 4 ժ. 15 ր.	գիշ.	12 ժ. 20 ր.
Թիֆլիս է հասնում	առ. 8 » 40 »	եր.	6 » 28 »
Թիֆլիսից դուրս է գալիս	» 9 » 10 »	եր.	7 » 32 »
Բաթում է հասնում	եր. 8 » 32 »	առ.	8 » 12 »

№ 2 գնացքը:		№ 4 գնացքը:	
Բաթումից դուրս է գալիս	առ. 9 ժ. 15 ր.	եր.	9 ժ. 05 ր.
Թիֆլիս է հասնում	եր. 8 » 53 »	առ.	9 » 45 »
Թիֆլիսից դուրս է գալիս	» 9 » 25 »	»	11 » 32 »
Բաղու է հասնում	ցեր. 1 » 04 «	»	6 » 15 »

ԴԻԼԻԺԱՆՍՆԵՐ

Հինգ հոգու համար:

Թիֆլիսից դուրս է գալիս 7 ժ. առ.	9 ժամ առ.
Գիշերում է Մլետում	Պասանաուր
Վլադիկավկազ հասնում է 7 ժ. 20 ր. եր.	9 ժ. 20 ր. եր.
Վեց հոգու համար (չեն գիշերում)	
Թիֆլիսից դուրս է գալիս 1 ժ. ցերեկ.	7 ժամ երեկ.
Վլադիկավկազ հասնում է 3 » 25 ր. եր.	9 ժ. 50 ր. եր.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Ն. Շպակօվսկի—12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի հ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Ն. Շպակօվսկի—6—7 ժ. նեարդային (ելեքտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վ. Մ. Մախվիլաձէ—քիմիական և խոշորացուցական հետազօտութիւն։

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ց. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիանդանոցի վերատեսուչ՝
109—150 Թէօդոպեռ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺ. ՄԻԽԱՅԻԼ ԳԷՂԷՎԱՆՈՎԻ

Հիւանդներին ընդունում է ամեն օր, բացի կիրակի օրերից։

Առաւօտեան՝

Վ. Ի. ՀԻՃԻՆԱՂԷ—ատամների հիւանդ. 8—10 ժ.
Գ. Գ. ՄԱՂԱԼՕՎ—ներքին հիւանդ. 9—10 ժ.
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—ականջի, կոկորդի և քթի հ. ամեն օր 10½—12 ժ.
Ե. Պ. ԳԱՈՒԴԷԼԻՆ—ներքին և երեխաների հ. ամենայն օր ժ. 11—12, բացի շաբաթ օրերից։
Ա. Ն. ՇԱՏԻԼՕՎ—աչքի հ.—12—1 ժ.
Վ. Լ. ՄԱՐԿԵՎԻՉ—վիրաբուժական հ. 12—1 ժ. և երեքշաբթի օր 3—4 ժ.
Ի. Դ. ԲԷԳԹԱԲԷԳՕՎ—վեներական, մորթի և միզասեռ. հ. 1½—2 ժ.
Մ. Ա. ԳԷԴԷՎԱՆՕՎ—նեարդային և ելեկտրոտէրապիա, 1—2 ժ.

Երեկոները՝

Դ. Ա. ԳԷԴԷՎԱՆՕՎ—ներքին և երեխաների հ. (ծաղկահատութիւն) 5—6 ժ.
Ի. Ն. ԹՈՒՄԱՆՕՎ—կանանց և մանկաբարձական, 5—6 ժ.

Հիանդանոցում գտնվում են մշտական մահճակալներ և բժշկական սենեակ խոշորացուցական և քիմիական հետազօտութիւնների համար։

Վճարը խորհրդի համար—50 կ. մնացածը պայմանով։ Նիկոլաևսկայա փողոց, Վօրոնցօվի արձանի հանդէպ, տ. Սագինօվի, № 11

Հիանդանոցի վերատեսուչ՝
0—41 Միխայիլ Գէդէվանով

ԹԻՖԼԻՍԻ ԿՐՈՒԺՕԿ

Կիրակի, մարտի 26-ին

Վ. Վ. ԼՈՒՆԿԵՎԻՉ

կը կարդայ

իր վերջին հրապարակական դասախօսութիւնը աշակերտների համար

ՉՐԻԱԿԵՐ ԵՒ ՀԱՅԱՓՈՐ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Դասախօսութեան ժամանակ ցոյց կը տրվեն պատկերներ մօգական լապտերով։

Սկիզբը ցերեկվայ ժամի 12-ին։

Տոմսակները (50, 30 և 20 կօպ.) Մեսանիկովի մագազինում, Դվօրցօվայա փողոց, Խիդեկէլի գրավաճառանոցում եւ պափլիօնում, Գօլովինսկի պրոսպէկտ, իսկ դասախօսութեան օրը՝ Կրուժօկի շինութեան մէջ։
2—2

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ

«ՄԻՋՆՈՐԴ»

(Посредникъ)

Դ. Ի. ԵԱԿԻՄՕՎԻՉԻ

Պուշկինեան պասաժ, Թամամշեվի քարավանսարայի հանդէպ։

Ծախվում են տներ, հողաբաժիններ՝ գործարաններ շինելու համար, քաղաքում եւ քաղաքից դուրս՝ գաւառներում։ Ամարանոցներ, նաբատին հողեր։ Մանրամասնութիւնների համար դիմել գրասենեակ։ № 2. 0—20

Առևտրական մարկան հաստատված կառավարութիւնից։

Ի նկատի առնելով այն

ՍՈՒՏԼՈՒՐԵՐԸ,

որոնք տարածվում են մեր կօնկուրրենտների կողմից

Վ. ՎԻՍՕՑԿԻ ԵՒ ԸՆԿ.

ԹԷՅԻ ԱՌԵՒՏՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

մի լրագրի միջոցով, որից յետոյ այդ լուրերն արտատպվեցին ուրիշ լրագիրներում, պատիւ ունիմ յայտնելու ի գիտութիւն ամենքի, թէ

Վ. ՎԻՍՕՑԿԻ ԵՒ ԸՆԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՄՕՍԿՎԱՅԻ ԹԷՅԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՇԽԱՏԵԼ

առաջվայ նման նախկին այժմ, շատ աւելի ընդարձակծա շինութեան մէջ։

Կառավարիչ Վ. Վիսօցկի եւ ընկ. Թիֆլիսի գրասենեակի՝ Ա. ԳՐԻԳԵՐԻՆ

1—5

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, թէ նրա դիւանատան մէջ 1900 թուի մարտի 28-ին, ժամի 12-ին նշանակված է աճուրդ՝ կապալով տալու Ջրմուղ խողովակի շինութիւնը Օլգինսկի փողոցից մինչեւ Կիրպիչնի փողոցը, 200 պագ. սաժէն երկարութեամբ եւ 5500 ր. արժողութեամբ։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան շինարարական բաժնում ամենայն լի օր ժամը 9-ից մինչեւ 3-ը։ 1—3

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ

Բաղդադի սպիտակ, ամենալաւ տեսակից, չերամապահական կայարանի սպիտակ ցեղլիւլեա խօսքը չը գծված, բանդերոլով, էժան գնով։ Հարցնել Թիֆլիսում, Սիօնի փողոց, եղբարք Մէլիք-Մարութեանցների խանութում։ 1—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Երեքշաբթի, մարտի 28-ին

Պ.պ. անդամների, կանդիդատների եւ նրանց ընտանիքների համար ռուսաց դրամատիքական խմբի դերասանները կը ներկայացնեն ռուսաց լեզուով Նեվեժինի կոմէդիաներից տեսարաններ

„НА ЗЫБКОЙ ПОЧВѢ“

եւ

„ШКОЛЬНАЯ ПАРА“ վոդեվիլը։

Տեղերի գինը 20 կոպէկից—1 բուբլի։

Սկիզբը 8½ ժամին։ 2—3

ՄԱՆԿԱԲԱՐԶՈՒՀԻ-ՄԱՍՍԱԺԻՍՏԿԱ

ՕՐԻՈՐԴ ՆՈՒՆԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԳՕԼՕՇԵԱՆ

Հասցէն՝ Красногорская ул. № 14. 18—21



Վաճառման գրքույկներ ընկերության գրասենեակում։ 34—50

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԱՒԱԳԸ

եւ նրա ընկերները խնդրում են՝ առաջին եւ երկրորդ գիլդիի պ.պ. վաճառականներին չնորհ բերել ընդհանուր ժողովն, որ լինելու է կիրակի, մարտի 26-ին, առաւօտեան 11½ ժամին, Թիֆլիսի ժողովարանի շինութեան մէջ։

Զբաղմունքի նիւթերն են՝ 1) 1899 թուի եկեւմուտքի հաշուի եւ այլ գործերի քննութիւնը, որոնք վերաբերում են վաճառականներին։

2) Ընտրութիւն վաճառականների աւագի եւ նրա ընկերների 1900 թուի համար։

3) Ընտրութիւն եօթ անդամների եւ երկու կանդիդատների Առեւտրի եւ մանուֆակտուրայի կոմիտէի համար, ըստ աւագութեան դուրս եկող անդամների փոխարէն։ 1—



ԳՐՈՂ ՄԵՔԵՆԱՅ

„ՐԵՄԻՆԳՏՕՆ“

(խսկական - օրինակելի)

ՀԱՅԵՐԷՆ ՏԱՌԵՐՈՎ

Շատ կարճ ժամանակից յետոյ ստացվելու է Թիֆլիսում Ժ. ԲԼՕԿ ԵՒ ԸՆԿ. ներկայացուցչի

Է. Ֆ. ԱՈՒՖԷՐՄԱՆԻ ՄՕՏ

Երեւանեան հրապարակի վրա։ 1—3

ПАРИЖСКАЯ ГАЗЕТА

Русское ежедневное политическое и литературное изданіе съ иллюстраціями въ текстѣ.

I Оффиціальный отдѣлъ: Дѣйствія и распоряженія русскаго правительства.—II Циркуляры и распоряженія по всемірной выставкѣ и по русскому отдѣлу.—III. Ежедневныя телеграммы и корреспонденціи изъ крупнѣйшихъ центровъ Европы и изъ главнѣйшихъ городовъ Россіи отъ собственныхъ корреспондентовъ.—IV. Политическое обозрѣніе.—V. Обзоры русской и иностранной печати.—VI. Хроника русской столичной и провинціальной жизни.—VII. Хроника иностранной жизни.—VIII. Судебный отдѣлъ.—XI. Театръ и музыка.—X. Фельетонъ: научное обозрѣніе, беллетристика.—XI. Всемірная выставка: описанія руссаго и иностранныхъ отдѣловъ.—XII. Спортъ.—XIII. Биржевой бюллетень.—XIV. Библіографія.—XV. Справочныя свѣдѣнія.—XVI. Объявленія.

Отдѣльные номера въ Парижѣ по 15 сантимовъ.

Подписка принимается съ 1-го и 15-го каждаго мѣсяца.

ЦѢНА СЪ ДОСТАВКОЙ И ПЕРЕСЫЛКОЙ

	1 мѣсяцъ	3 мѣс.	6 мѣс.	1 годъ
Во всѣ города Россіи	3 р.	8 р.	15 р.	28 р.
Въ остальные города почтоваго союза	7 франк.	17 фр.	35 фр.	70 фр.
Въ Парижѣ и въ Д-тѣ Сены и Уазы	5 „	13 „	25 „	50 „
Въ остальной Франціи	6 „	15 „	30 „	60 „

Объявленія (для Россіи) { На 1-ой стр. по 5 франковъ (2 р.) за строку петита; На 4-ой стр. по 1 фр. 50 сант. (60 к) „ „

Подписки и объявленія принимаются: въ **главной конторѣ Парижской Газеты**, Парижъ 18, Бульваръ Монмартръ

(*Administration de la PARIJSKAYA GAZETA, Paris, 18, boulevard Montmartre*);

въ отдѣленіи конторы на всемірной выставкѣ; въ главнѣйшихъ книжныхъ магазинахъ заграницы и Россіи; въ книжныхъ магазинахъ Т-ва Вольфа, Мелье, въ Петербургѣ и Новаго Времени, въ Петербургѣ, Москвѣ, Харковѣ и Одессѣ; въ Москвѣ, въ конторѣ Ф. Згодинскаго (отдѣленіе конторы Русскаго Листка), Петровка д. Грачева; въ Москвѣ и Петербургѣ; въ конторѣ торговаго дома Л. и Э. Метцль и К° и въ Агентствѣ Парижской Прессы Віолэ; въ Одессѣ: въ книжныхъ магазинахъ Руссо, Москетти, Распопова, Штадельмайера и въ газетномъ кіоскѣ Свистунова; въ Кіевѣ: въ книжномъ магазинѣ Идзиковскаго; въ Харковѣ: въ книжномъ магазинѣ „Южнаго Края“.

Отдѣльные номера продаются въ кіоскахъ и на станціяхъ желѣзныхъ дорогъ. 3—3

94—67

13—30 131559

Дозволено цензурою, Тифлисъ, 23 Марта 1900 г. Типографія Грузинск. Т.—ва, Большая-Ванкская ул., № 27.